

ներկայ ժամանակի գիտութեան հետ համեմատելով, և երկրորդ՝ որ ծանօթացնէի բազուեցուց թարգմանիչ պարոն Յօհաննանի և ազնուապետ պարոն Վարդանի հետ, որք ինչպէս երեւում է այն դրուածից՝ դարուս սկզբներում նշանաւոր մարդիկն էին: Յիրաւի բազուեցիք պ. Վարդանի անունը միշտ յիշում են, ինչպէս և պ. Թօմաս Այվազեանի անունը, բայց պ. Յօհաննանի անունը չեմ լսել ոչ Բագու և ոչ Չամախի:



ԻՏէր Յօհան եպիսկոպոս և չնորհիւ ամենագօրին Աստուծոյ լիեալ Առաջնորդ գերահօգորի Աթոռոյս սրբոյն Ստեփաննոսի Նախավկային Քրիստոսի. յորմէ հասցէ թուղթ սիրոյ ողջունի օրհնութեան և նամակ պահպանութեան: Ի վերայ ազնիւ սիրելոյց մերոյ թարգմանիչ պարոն Յօհաննանի և, ի ընդ յամենայն սիրելեացդ և համախո բարեկամացդ եղիցի տէրամբ մերով միշտ: Ամէն:

Եւ ընդ Աստուածային օրհնութեամբս յայտ լիցի յատկականի սիրելոյս մերոյ, քանզի հրամանոցդ գրեալ ի բազմակրնիք և հասարակածայն թուղթն մեզ էհաս ի յուլիսի Ժ. Թոջն, և մերս տեսեալ գհատատութիւն նորին որպէս որ օրէնքն պահանջ է, և դուք ենթ ընդ օրինօքն գրելով, ուստի և մեր եւս հարմար նորին գիր գրեցաք առ նա իբր թէ ոչ է հարմար և օրէն քեզ, զի դու լիցիս շփոթման և խռովութեան պատճառ ի մէջ ժողովրդեանն, որովհետեւ նոքա ոչ կամին լինիլն դորա այդպէս անյարմար բանիւ. ահա գրեմ որ թարց պատճառի այդ տիրացուդ և գորին հասարակութեան թուղթն որ առ քեզ է հեզ յղեսցես առ մեզ և մեր յղեսցուք զդոցա առ Բագու, զի վերացի խռովութիւնքն ի միջոյ ժողովրդեանն: Իսկ նա առ մեզ այսպէս էր գրեալ պատասխանն թէ, քանի մի պատուելի անձանց գիտութեամբն այս տիրացուիս քանիս անգամ ասացի թէ, զնա որպէս որ նոքա գրեալ են նոցին կամայն հաճիր, և սա ոչ հանձն էառ. այլ ընդզէմ գրութեանն ձերոյ զայս ասաց թէ, որովհետեւ որ նոքա ոչ կամեցան որ ես